

N 22-28  
19.03.2022

ՀՀ արդարադատության նախարար  
պարոն Կարեն Անդրեասյանին.

## ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,


ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) 2022թ. մարտի 17-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ տեսակցել են ազատագրված մի քանի անձանց.

### 1. Բախժի Դավթյան

Բախժի Դավթյանը գտնվում էր պատժախցում, հայտարարել էր հացադուլ, պահած էր գետնին՝ պանդերների կույտի վրա, (քանի որ պատժախցում փակում են մահակալը և ցերեկային ժամերին տանում են անկողինը): Իր տեղեկացմամբ տառապում է գիշերամիզությամբ, նա պնդում է, որ չի կարող գտնվել այլ դատապարտյալների հետ նույն խցում, քանի որ չի կարողանում վերահսկել իր հիվանդությունը և ամաչում է, ինչպես նաև վստահ է որ կենթարկվի ծաղրի ու խտրականության: Ինչպես նաև ունի շագանակագեղձի բորբոքում և գիշերամիզության ժամանակ հաճախ լվացվելու կարիք է ունենում: Խցերում տաք ջուր չկա, իսկ սառը ջրով և հաճախ հոսող ջրի բացակայության պայմաններում չի կարողանում լուծել հիգիենայի հետ կապված հարցերը: Նա նշեց, որ 2020 թվականին բուժում է ստացել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, որտեղից էլ տեղափոխել են ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ, երկարատև ժամանակահատվածում գտնվել է բուժմասում: Բախժի Դավթյանը զգուշացրեց, որ կատարելու է ինֆորմացիան, եթե իր նկատմամբ վերաբերմունքը չփոխվի: Անհրաժեշտ են համարում նաև արձանագրել, որ ուներ անբնական նիհարություն՝ 190 սմ հասակի պարագայում կշռում էր 60 կգ-ից պակաս:

### 2. Պերն Մկրտչյան

Պերն Մկրտչյանը նույնպես գտնվում էր պատժախցում և հացադուլ էր հայտարարել: Վերջինս տեղաշարժվում էր հենակներով, քանի որ ունեցել է վնասվածք՝ կրունկները փերված են եղել և ոսկրային հյուսվածքները ճիշտ չեն սերտանել: Նա չի կարողանում ոտնաթափ դնել գետնին, ուստի չի կարող օգտվել խցային պայմաններում առկա ասիական գուգարաններից: Նա նշեց, որ իրեն դժվար է կֆանստելը, իսկ բուժմասում կար գուգարանակոնֆ: Այլ որևէ հարմարություն նրան չեն տրամադրել: Պատժախցում գտնվելու 2-օրյա ժամանակահատվածում նա խուսափում է գուգարան գնալուց, քանի որ չի կարող կֆանստել: Պերն



Մկրտչյանը տառապում է նաև մի շարք այլ հիվանդություններով (Քրոնիկական անոթալ էուզիվ գաստրիտ, բուլբիտ, Ռեֆլյուէս էզոֆագիտ, Կարդիալ փականի անբավարարություն, Աստենո-դեպրեսիվ վիճակ, Լյարդի կավերնոզ հեմանգիոմա, Զույգ կրունկոսկրերի ոչ ճիշտ սերտահած կտրվածք, Վիճակ կոնսերվատիվ բուժումից հետո, Կրունկ ոսկրերի դեֆորմացիա, երկու կողմից կրունկ-վեզային և կրունկ-խորանարդածև հոդերի արթրոզ, Ողնաշարի դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններ, C6/C7 միջոդային սկավառակի հոդվածք, TH7/Th8, L3-SI միջոդային սկավառակների պրոտրուզիաներ ախտորոշմամբ): Պերն Մկրտչյանը նաև հայտնել է, որ իրեն մեկ օր առաջ այցելել են ֆիզիկական բժշկական կենտրոնից և նշանակվել է ֆիզիոթերապիա՝ ոտների վերականգնման համար:

### 3. Կարեն Հովհաննիսյան

Կարեն Հովհաննիսյանը տեղափոխվում է անվասայլակով, գտնվում է բուժմասում: Խնդիրներ ունի նաև սրտանոթային համակարգի հետ, ախտորոշվել է զարկերակային հիպերտենզիա 3-րդ աստիճան, բարձր ռիսկային կրիզային ընթացք: Ըստ բժշկական փաստաթղթերի խորհուրդ է տրվել նրան բուժումը շարունակել սրտաբանի հսկողության ներքո: Կարեն Հովհաննիսյանը նշեց նաև, որ դժվարությամբ է լսզանք ընդունում, քանի որ հենաբաժնողական խնդիրներ ունեցողների համար չկա որևէ հարմարություն, խնդրել է կոնֆարտո տրամադրել, սակայն մերժել են:

Հարցը ֆինանսավել է նաև «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի Արմավիր ստորաբաժանման ղեկավարի հետ: Նա նշեց, որ արվել են բոլոր հնարավոր հետազոտությունները, որոնց վերաբերյալ կան համապատասխան գրառումներ բժշկական փաստաթղթերում, նաև Պերն Մկրտչյանի համար հրավիրել է Ֆիզիկական բժշկության կենտրոնի մասնագետներին, օրերս կտեղափոխեն իրենց մոտ՝ քերապիայի: Հարցին, թե արդյո՞ք նա հեռակներով կարող է օգտվել ասիական զուգարանից, պատասխանեց, որ նրա ազդրային հոդերը լավ վիճակում են, սակայն մեր հարցին, թե արդյո՞ք ոտնաթափերի վիճակը թույլ կտա նրան կֆանստել, պատասխանել է, որ դա կարող է լուծվել կոնֆարտի միջոցով, սակայն դա պետք է բերեն անձի հարազատները: Բուժմասի ղեկավարը նաև նշեց, որ Կարեն Հովհաննիսյանին առաջարկվել է տեղափոխել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, սակայն նա հրաժարվել է:

### Եզրահանգումներ.

Կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Խոնքն արձանագրում է, որ ազատագրվածներ Բախի Դավթյանի, Պերն Մկրտչյանի և Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ ցուցաբերվել է անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Մասնավորապես.

- Բախի Դավթյանի առողջական վիճակը պահանջում է բուժօգնության տրամադրում, մինչև առողջական խնդիրների լուծումը, չտեղափոխել ընդհանուր խցում, որտեղ կարող էր ենթարկվել ծաղրածանակի և խտրական վերաբերմունքի (նման հիվանդության պարագայում գտնում ենք, որ այդ ոխկը բարձր է): Նվաճից բացի, այդ վիճակով անձը չպետք է տեղափոխվի պատժախոց:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԵՐԻ ԽՈՒՄԲ

- Պերն Մկրտչյանի առողջական վիճակը նույնպես պահանջում էր բուժօգնության տրամադրում, վերջինիս պնդումը, որ չի կարողանում օգտվել ասիական տիպի զուգարանից նույնպես հիմնավորված է, հիմնարկը պետք է միջոցներ ձեռնարկեր պատճան պայմաններ ապահովելու ուղղությամբ, որը չի արվել:
- Կարեն Հովհաննիսյանի պահանջը կոնֆաբո տրամադրելու վերաբերյալ նույնպես իրավաչափ է: Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ Կարեն Հովհաննիսյանի մասով դեռևս 01.03.2022թ. Խումբը ներկայացրել էր թիվ 22-24 ընթացիկ հաշվետվություն՝ առաջարկելով կազմակերպել Կարեն Հովհաննիսյանի բուժօգնությունը և բուժումը, ինչպես նաև նրան ապահովել լոգանքի համար հարմարավետ արձույժ՝ նախատեսված հաշվետվություն ունեցող անձանց համար: Սակայն պարզվել է, որ խնդիրը որևէ լուծում չի ստացել:

Առաջարկություններ.

- Բախժի Դավթյանի գիշերամիզության հետ կապված կազմակերպել անհրաժեշտ բուժօգնություն, ստուգել շագանակագեղձի վիճակն ու հոգեկան առողջության հետ կապված խնդիրները: Մինչ այդ կատարել հոգեբանի խորհրդատվություն ինֆնամասումից խուսափելու համար, ինչպես նաև հանել պատժախցից:
- Պերն Մկրտչյանին մինչև ֆիզիկական բժշկության կենտրոն տեղափոխելը հանել պատժախցից և ապահովել առողջական վիճակին համապատասխան զուգարանային պայմաններ: Ֆիզիկական բժշկության կենտրոն տեղափոխելուց հետո բուժօգնություն տրամադրել նաև այլ հիվանդությունների մասով:
- Կարեն Հովհաննիսյանի մասով արդիական է մնում Խմբի 01.03.2022թ. թիվ 22-24 հաշվետվությամբ ներկայացված առաջարկը՝ կազմակերպել Կարեն Հովհաննիսյանի բուժօգնությունը և բուժումը, ինչպես նաև նրան ապահովել լոգանքի համար հարմարավետ արձույժ՝ նախատեսված հաշվետվություն ունեցող անձանց համար:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան